

Մարգալեաի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը
„Եւրոպական ժառանգության օրեր,, ծրագրի շրջանակում Աշնակ համայնքում
կազմակերպված միջոցառման ժամանակ /01.10.2017/

Եվրոպական ժառանգության օրերն անց են կացվում յուրաքանչյուր տարի՝
Եվրոպական մշակութային կոնվեցիային (1954թ.) միացած 50 Եվրոպական
երկրում:

Ծրագրի իրականացման գաղափարը ծագել է 1984թ. Ֆրանսիայում
«Պատմական հուշարձանների բաց դռների օր» խորագրի ներքո: Հայաստանը
միացել է այս ծրագրին 2000 թվականին:

Եվրոպական ժառանգության օրերը Հայաստանում այս տարի անց է կացվում
սեպտեմբեր 30-ից հոկտեմբերի 1-ը «Ժառանգությունը և բնությունը»
խորագրի ներքո:

Եվրոպական ժառանգության օրերի շրջանակում Արագածոտնի մարզում
կիրականացվեն միջոցառումներ, ընդգրկելով մարզի 4 տարածաշրջանների
114 համայնքները:

Մարզի հանրակրթական դպրոցներում կազմակերպվում է բաց դասեր
«Ժառանգությունը և բնությունը» թեմայով:

Դպրոցները կմասնակցեն շարադրության մրցույթի՝ «Խաչքարերն ու
վանքերը մեր» վերնագրով: Լավագույն ճանաչված երեք շարդրությունների
հեղինակները կխրախուսվեն:

Գեղարվեստի դպրոցի սաների աշխատանքների ցուցահանդեսը կրում է
«Հայկական զարդանախշեր» վերտառությունը:

Սեպտեմբերի 30-ին ժամը 12:00 Թալինի թիվ 2 դպրոցում կազմակերպվող
ինտելեկտուալ խաղ վիկտորինային՝ «Մարզի եկեղեցիների ու բերդերի
պատմությունը» թեմայով, կմասնակցեն Աշնակի, Թալինի թիվ 1 , թիվ 2 և
Կաթնաղբյուրի դպրոցների թիմերը:

Ներքին Բազմաբերդում սեպտեմբերի 30-ին ժամը 15:00 Թալինի տարածաշրջանի դպրոցները կներկայացնեն ազգային տարազներով տիկնիկների ցուցահանդես և տիկնիկային ներկայացում:

Հոկտեմբերի 1-ին գոբելենի, գորգագործության, մաքրամեի աշխատանքների ցուցահանդեսներ կկազմակերպվեն Ապարանի թիվ 2 դպրոցում, Արագածի տարածաշրջանի Մելիք գյուղում, Աշտարակի Պերճ Պոռոջանի տուն-թանգարանում: Ապարանի շրջանի Քուչակի միջնակարգ դպրոցում կազմակերպվող «Ուտեստի փառատոնին» կմասնակցեն Ապարանի շրջանի 10 դպրոցներ:

Աշտարակում գտնվող «Պասկալ և Դիադո» սրճարանում (Կարմրավոր եկեղեցու հարևանությամբ) կկազմակերպվի ընկույզի փառատոն:

Պերճ Պոռոջանի տուն-թանգարանում հոկտեմբերի 1-ին կկազմակերպվի վարպետաց դասեր հին հայկական արհեստների՝ կավագործության, փայտագործության, գորգագործության, տիկնիկագործության, կերամիկայի վերաբերյալ:

Աշտարակում կկազմակերպվի լավաշի թխման, խաղող տրորելու, սուջուխի պատրաստման արարողություններ՝ ծիսական երգ ու պարով:

Ուչանի միջնակարգ դպրոցում հոկտեմբերի 1-ին ժամը 12:00 տեղի կունենա «Սասնա ծռեր» էպոսի մարզային փառատոն:

Երկօրյա միջոցառումները նպատակ ունեն մարզում ներկայացնել ժառանգաբար փոխանցվող արժեքներ, որոնք մեր մշակույթի նկարագիրն են:

Ժառանգենք մեր սերունդներին մեր պապերից ստացած արժեքները՝ պահպանելով ազգային ինքնությունը: